

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

1994 թուականին Երևանի մէջ «Սասուն - Տարօն» հայրենակցական միութեան կազմակերպութեամբ Սասնոյ ապստամբութեան հարիւրամակը տօնուեցաւ, ուր ներկայ էին նաև ես, ու վիս հրաւիրած էին քանի մը խօսք ըսելու իրրե արտերկրէն եկած սասունցիի մը պաւակը:

Այո, ես պաւակին եմ Սասնոյ գիւղերէն Կերմաւ աւաանի մէջ ծնած ջաղտոյ պան Օվէիւ, որ դեռ մեծ եղեռնէն տարիներ առաջ քառասուն օր, գիշեր-ցերեկ քալելով հասած էր Այնթապ, կեցութիւն էր հաստատած, ապա մասնակցած էր Այնթապի հերոսական ինքնապաշտպանութեան կռիւներուն, որուն ղեկավարները, շնորհիւ հմուտ ապստագրական իրենց պայքարին, կրցան ժողովուրդը փրկել և առաջնորդել դէպի Սուրիա:

Վստահ եմ, որ Կերմաւցի հայրս՝ Օվէն, եթէ մնացած ըլլար հայրենի գիւղը, ան ալ հերոսարար պիտի կոուէր թշնամու ռէմ ե պիտի կողմնակցէր բոլոր անոնց, որոնք գիտակցած էին թշնամիին թուական ու վիճակաւորութեան առաւելութիւնները ե մաւաւանդ անտր հայր ընտջնջելու նպատակը, ե գիտակցած էին, որ վէնքի ու վիճակներքի, ուտեստեղէնի քիչ պտշարներով չեն կրնար դիմանալ ե կրնան թշնամիին սադրանքներուն վոհ երթալ. ուստի, որոշած էին ճեղքել թշնամիին պաշարման օղակը և ժողովուրդը տանիլ դէպի Մուշ, ուր հասած էր ռուսական քանակը:

Եւ մենք անհամար վոհեր տուինք մեր ինքնապաշտպանական կռիւներու ընթացքին ե, անկէ յետոյ պաշարման օղակը ճեղքելու ուշացած փորձերը անթիւ նահատակներ խլեցին մեզմէ, ներստեալ հօրս ողջ գերդասասանը:

Այդ ահաւոր ու մահարեր կռիւներէն յետոյ, այդ սարսափելի կոտորածէն վերապրածներ՝ Գելիէգուպանցի, Շենիկցի, Սեմալցի, Տարվորիկցի, Ադրիկցի, Իշխանաձորցի, Կերմաւցի և միւս գիւղերէն ապստուած ընկորներ, ահա այսօր հայրենի հողի վրայ նոր Սասուն մը կառուցեցին, մէկ անգամ ես ապուցուցելու, որ հողին վրայ արմատաւորուած մեր ժողովուրդը օժտուած է աշխատասիրութեամբ ե յարատեւելու հզօր կամքով:

Թալինը ատոր խորերդտնիշն է:

Թալինը նաե անցեալը յիշեցնող պարտաւորիչ կոթող մըն է, որ կը բովանդակէ մեր նախնիներուն ասոյթները, թէ՛


- Սասունցիին համար հայրենիքն ու ժողովուրդը պաշտպանելը սրբապան պարտք է, փառք է ու պարծանք:

- Պատուով մեռնիլը աւելի լաւ է քան անպատիւ ապրիլը:

Պատուով կոուեցան մեր նախնիները ե պատուով մեռան:

Բանագետ Ռաիսա Խաչատրյանի այս ժողովածուն թող յուշատօն մը ըլլայ անոնց, որ բարրարոս թուրքերուն կողմէ նահատակուեցան, յիշատակագրութիւն մը՝ մեր անշիրիմ վոհուածներուն:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԻՄՈՆԵԱՆ



**Ծանոթություն.** Քարտեզում նշված են վերարձակեցման հիմնական ուղիները: Որոշ գյուղերի չիտխարեն նշված են տվյալ գավառի կամ գավառակի անվանումը, դրանք են՝ Ալաշկերտում Բլուր գյուղը, Բասենում Կրդարազը, Խնուսում՝ Գոպալը, Տարոնում Ալվառիցը և Ծղակը: